գիտացված լսարանում՝
ֆատանքների ժամին:

ԱՌՈՒՄ

...ման, շարժասանդուղ-
...ծ: Այդ նրանք են՝ Ե-
...եխնիկական ինստի-
...տուտալուրգիական ֆա-
...ոլներ Աշոտ Խաչա-
...ատ Մելիքյանը, Աշոտ
...վիկ Հարությունյանը,
...լյանը և էլի մի քանի
...գործներ, որոնք մայ-
...ոդոպոլիտենի «Սարա-
...ասում լավ աշխատե-
...հանցել են շնորհա-
...լաների հետ է նաև
...ական շինարարական
...ավար, ֆակուլտետի
... քարտուղար Արծվիկ
...համանեց: Տղաները և
...ն կանգնածները ներս
... փակվեցին:
... հաղորդեց.
...այարանը՝ «Երիտա-
...ՈՒՀԻ ՍԱՂԱԹԵԼՅԱՆ
ՀՄՖ ուսանողուհի

ՆՔՆԵՐԸ

...ստլետիկա, վոլեյբոլ
...երից: Ինստիտուտը
...ից չի կարողանում
...արձ կարգայիններ՝
...ր ու հարմարություն-
...պատճառով:
... է Մյասնիկյանի շըր-
...վ անցկացվող կա-
...ադիան, որտեղ սպոր-
...ից (սեղանի թենիս,
...յբոլ) գրավել ենք ա-

Ա. ՄԵԼՔՈՆՅԱՆ
...ն դաստիարակության
...ամբիոնի վարիչ

ՀՍ 64—4
Արեշատյան Սերգեյ
Ավետիսյան Գայանե
Զաքարյան Հասմիկ

Նախմուրադյան Մանվել
Մ 84
Գալստյան Ռաֆիկ
Գրիգորյան Ռաֆիկ
Սիմոնյան Սերյոժա
Մ 85
Սարգսյան Մարատ
Մ 73
Գալումյան Սեյրան
Գրդիլյան Էդուարդ
Մ 74
Բեգլարյան Դավիթ
Մուրադյան Օնանիկ
Գողոսյան Կամո
Խաչատրյան Արայիկ
Մ 75
Ջիլարյան Արծրուն
Մ 77
Սարգսյան Հայկազ
Վարդազարյան Ռազմիկ
Մ 79
Ավագյան Մյասնիկ

Հանդիպում նկարչի հետ

Զմեռային արձակուրդի օրերին Մոսկվայում մեր խումբը այցելեց հայ անվանի նկարիչ Ռ. Խաչատրյանի արվեստանոցը: Սա նկարչի հետ մեր երկրորդ հանդիպումն էր: Առաջինը կայացել էր Երևանում, Նկարչի տանը բացված նրա անհատական ցուցահանդեսում: Երկու անգամ էլ հանդիպումը կազմակերպվեց շնորհիվ մեր խմբի քաղդաստիարակ Մ. Տեր-Հովհաննիսյանի:

Նկարիչը մեզ ընդունեց հայկական ջերմ հյուրասիրությամբ: Մի հիանալի անակնկալ էր սպասվում նրա արվեստանոցում: Այնտեղ էր արվեստագետի բարեկամ, լեզվագետ ու փիլիսոփա Մ. Մելքումյանը, որի կերպարին բազմիցս անդրադարձել է նա իր ստեղծագործություններում: Դիտեցինք արվեստանոցը, անավարտ նկարները, նկարչի կողմից գործածված տարբեր ոճի ու ձևի առարկաներ՝ շալմաներ, գլխանոցներ, որոնք օգտագործելով հեղինակը կարողանում է բացահայտել մարդկային յուրօրինակ բնավորություններ: Սենյակի կեսը զբաղեցնում էր բեմահարթակը, որտեղ տեղադրված էր դաշնամուրը: Նրա վրա նվագել է ինքը Ս. Ռիխտերը:

Հյուրընկալ սուրճի գավաթի շուրջ սկիզբ առավ մտերմիկ զրույց, որի ընթացքում Ռ. Խաչատրյանը պատմեց իր դեգերումների ու մաքառումների մասին՝ կյանքի ճանապարհի կեռմաններում, և վերջապես իր վերադարձի մասին դեպի ճշմարիտ արվեստը, դեպի բնությունը: Իր այս վերադարձը դեպի սկիզբը, նկարիչը մեկնաբանեց հետևյալ կերպ.

— Այն, ինչ տրվում է մարդուն բընությունից, աննպատակ չէ, և մարդը միշտ էլ գիտակցում է իրեն տրվածի արժեքը: Մանկուց մեզ ուղղություն է տալիս մի ներքին ձայն, որը հենց ինքը բնությունն է: Մինչև հիմա էլ զարմանում եմ այն գործերիս կատարյալությամբ, որոնք ստեղծվել են պատանեկության տարիներին: Գարգապես ժամանակ է պետք օժտված մարդուն կազմավորվելու, հղկելու իր ճաշակը մարդկության ստեղծած դարավոր կուլտուրայի նմուշներով այնպես, որ չլինի կրկնություն: Այս ամենից հետո գալիս է «վերադարձը»:

— Ի՞նչ է նկարչությունը,— եղավ մեր հաջորդ հարցը:

— Նկարչությունը արարչագործություն է: Արվեստի այս ճյուղի ամենադիպուկ բնորոշումը, անկասկած, տվել է Լեոնարդո դա Վինչին. «Այն, ինչ տրվում է բնությունից, նկարիչը ոչ թե պատճենավորում, այլ վերադարձնում է մարդկանց»: Ինքնատիպությունը ծնվում է հենց այդ վերադարձնելու պրոցեսում:

— Ինչո՞վ բացատրել, որ ձեր ստեղծագործության հիմնական ժանրը դիմանկարն է: Միակերպությո՞ւն չէ արդյոք սա:

— Ոչ, միակերպություն չէ: Մարդը ինքը բնությունն է՝ բազմազան իր դրսևորումներով: Հենց այդ պատճառով էլ տարբեր անհատների դիմանկարները չեն կարող միօրինակ լինել: Նրանցից յուրաքանչյուրը մի անհատականություն է, մի կոնկրետ կերպար: Նկարելով մարդուն, ես միշտ բնությունն եմ նկարում: Իմ կյանքում գլխավորը սերն է, սերը մարդկանց, բնության, կյանքի նկատմամբ: Այդ սիրո դրսևորումը հենց իմ ստեղծագործություններն են, որոնցում ձգտում եմ հասկանալի լինել բոլորին:

Մեզնից յուրաքանչյուրը շատ երկար կհիշի անվանի նկարչի հետ այդ հանդիպումը, նրա յուրաքանչյուր բառը:

ԶԵՓՅՈՒՌ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
ՀՍ 82—3 խ.

Получено
Апр. 23 марта 81
Второе с хуудасны
Встречи
студента
Ереванского
политехнического
института

Խմբագիր՝ Ռ. Հ. ԴԱՎԹՅԱՆ
Редактор Р. А. ДАВТЯН

...ԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ.— 375009, Երևան— Տերյան փող. 105, 9-րդ մասնաշենք, 3-րդ հարկ, 326 սենյակ Հեռախոս՝ 56-955-8-95
АДРЕС РЕДАКЦИИ: 375009, Ереван—9, ул. Теряна 105, корпус 9, комн. 326, Тел. 56—955—8—95.

...թյունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետական կոմիտեի № 2 տպարան, Երևան, Տերյան № 44:
комитета по делам издательств, полиграфии и книжной торговли Арм. ССР, Ереван, ул. Теряна, 44.